ՄԻ ԱՆՅԱՅՏ ՏԱՂԱԲԱՆ

Ղարադան գաւառի կենսամթերքի առատութիւնը, Հայ դեղջուկ ժողովրդի տնտեսական բարեկեցիկ վիճակը, նրանց հայկական հարազատ ոգին, նահապետական հին ու մոռացուածները, Հայ եւ Պարսիկ գիւղացիների սերտ բարեկամութիւնը, մանաւանդ Հայերի ջերմ հիւրասիրութիւնը տաղտկանի հոգու մթայ շատ խոր տպաւորութիւն են թողնում եւ նա Ղարադանից բաժանուելիս դեղջուկ ժողովրդի դեղեցիկ բարեմասնութիւնները մի առանձին տաղով պատկերում է այսպէս.

Մնա՛ս ջարեաւ, ո՛վ դու երկիր,
Առատ ու լի դու Ղարադաղ.
Կրճուճներդ եղ ու պանիր,
Պարծենալի դու Ղարադաղ:

Սեր ու հում սեր ոդջ չորացնում
Ու բեռներով Թէհրան ծախում.
Եւ շատերին բաժին հանում,
Երեւելի դու Ղարադաղ:

Ոչխարները բազմահօտով,
Երկիրը է կանաչ խոտով.
Շատ կենդանիք եզներ ու կով,
Ունես միշտ լի դու Ղարադաղ:

Ձեր ոբշաէքը շատ համով է,
Ղավուրմէքը պարծանքով է.
Ուտողը էհզ միշտ կը գովէ,
Միշտ գովելի դու Ղարադաղ:

Այլ բաներից դու չես պակաս,
Պահում էք դուք միշտ ծամ ու պաս.
Ոչ մէ հոգու չէք տայ վնաս,
Պատվական ես դու Ղարադաղ:

Դուք ճշմարիտ բրիստոնեայ էք,
Ընդհանրապէս մատաղ կ'անէք.
Եւ իրարու բաժին կը հանէք,
Հոգով բարի դու Ղարադաղ:

Շահսէվանի դուք միջումն էք,
Դուք ամերկիւղ միշտ շրջում էք.
Քաջ ու կտրիչ սիրտ դուք ունէք,
Քաջամարտիկ դու Ղարադաղ:

Շատ առատ է, ճիշտ եմ ասում,
Ժողովուրդն է կիսատուսում.
Հեղնեերին չեմ բամբասում,
Հղճալի ես դու Ղարադաղ:

Հայ ու Պարսիկ են մի ճմաճ,
Իրարու տուն կ'երթան, կը գան.
Ուրախ բերնով բարեւ կը տան,
Ուրախալի դու Ղարադաղ:

Պատուեցիք իմն ինչ արժան էր,
Որպէս հայրը որդուն նայէր.
Շնորհակալ եմ, մեծ ընծայ էր,
Շնորհով լի դու Ղարադաղ:

14.

Իմաստասիրական խոհեր

Տաղարան Դանիէլի ձեռագիր մատեանի մի քանի նիւթերը իմաստասիրական բնոյթ ունեն՝ առեղծուածային հարցերի երանգաւորումներով: Դրանցից յիշատակենք «Անպիտելին», որով նա քննութեան է ենթարկել աշխարհի եւ երկրագնդի սկզբնաւորութեան կարեւոր եւ յուզիչ հարցը: Նա վերյուծելով այդ էական խնդիրը, եկել է այն եզրակացութեան, որ դեռ ոեւէ գիտնական, փիլիսոփայ եւ կամ իմաստուն չեն կարողացել փաստացի ապրիւրներով հաստատել եւ ճշդրիտ բացատրութիւն ու լուսաբանութիւն տալ, թէ ե՞րբ, ո՞ր դարաշրջանում սկիզբ է առել աշխարհը: Երգիչը

digitised by A.R.A.R.@

չօշափել է նաեւ մի այլ լուրջ խնդիր: Նա գտնում է, որ մարդիկ դեռ չունեն այն բարձր գիտական խոր պատրաստութիւնը, որ կարողանան բացատրել «երկնային օրէնքների» գաղտնիքը: Ընդդէմ է նաեւ, որ Հրեաների Նշանաւոր Մոլէկս Մարդարէն ներկայ չի եղել աշխարհի ստեղծագործութեանը եւ եթէ նա գրել է «Հնգամատեան»ը եւ կրօնական օրէնքներ է մշակել, այդ նրա համար, որ մարդիկ պաղատիր կապմեն աստուածային զօրութեան մասին եւ չրնկնեն «հեռու մտքերի մէջ»:

Տաղաբանը քննութեան է առել նաեւ մի այլ կարեւոր երեւոյթ, թէ արդեօք ճշմարի՞տ է, որ նախամարդու հայրն եղել է Ադամը, արդեօ՞ք նրանից առաջ հողածին չի եղել: Նա չի կարողացել իր միտքը յստակ այդ էական հարցը լուսաբանել եւ յուսահատ արձանագրել է.

Գրուած է սկիզբ աշխարհի Ադամն եղաւ,
Արդեօ՛ք ճշմարի՞տ է, որ գրեցին իրաւ,
Հաստատե՞լ են այդ ճշմարտութիւնը,
Էլ Ադամէն առաջ էլ հողածին չկա՞ր քնաւ:

Դանիէլը ունի նաեւ իր փիլիսոփայական մտորումները: «Մին օր աշխարհ կը համբառնաս» տաղով աշխարհի մասին նա սրճառական կարծիք է յայտնել: Նա մարդաբէական իմաստութեամբ նշել է, թէ այս պեղեցիկ աշխարհը մի օր «վերանալու» է եւ բոլոր մարդիկ, բոլոր շինչաւորները գոյութիւն չեն ունենալու. չեն լինելու նաեւ արեգակն ու լուսինը: Կատարեալ լուսիններն ու խաւարն են իշխելու երկրագնդում: Միայն լինելու է նրա ստեղծողը:

15·

Հասարակական Ոտանաւորներ

Տաղաբան–աշուղն ապրել է նաեւ գիւղացիների ցաւերով, տանջանքներով, արձանագրել է դիւսուրապէս Զարհամալ գաւառում պատահած բնութեան սխուր երեւոյթներն ու դժբախտ դէպքերը — ադէտարեր մորեխը, սոսկալի երաշտը, մահաբեր սովը, անասունների ժանտախտը («գոմմարդի») եւ այլ յուզիչ անցքեր, որոնք դժբախտացրել են գիւղական աշխատասէր, չինարար ժողովրդի խաղաղ ու երջանիկ կեանքը:

Այդ ծանր պատահարներից մէկը 1914–ի մոտալ Թուականն է: Դա Զարմահալի Հայ գիւղացիների կեանքի պատմութեան նորագոյն չրջանի ձախորդութեան սկիզբն է, երբ անցնում են նրանց «լաւ օրերը ցնծալի» եւ դժբախտ, ծանր պատահարների հետեւանքով հետզհետէ քայքայւում են նրանց անտեսական պայմանները, որի հետեւանքով չատերը դժբախտանում են, աղքատանում, բայց ո՛չ ոք նրանց չի օգնում եւ նրանք տհպատած թողնում են իրենց օջախները եւ դագթում այլ գիւղեր ու քաղաքներ:

Տաղաբանն իր ձեռագիր Ա. մատեանի 31–րդ էջում գիւղական ժողովրդի թչուառութեան եւ նեղութեան յուզիչ կեանքի պատկերը գծել է այսպէս.

«— ... Սիրելի ընթերցո՛ղ, մի քիչ դրէմ Զարմհալու դժբաղտութիւնը... Զարմհալը Շահ–Աբբասի օրով մասաւորապէս 60 գիւղ է կազմուած եղել եւ մինչեւ օրս ցոյց է տալիս իր նախնիքի հետքը իր հսկայ չէնքերով եւ գերեզմանատներով, բայց այդ հսկայ ժողովուրդը, որ մօտ կարելի է ասել 15 հազար բնակչութիւն է ունեցել ու գնացել են, թէ ո՞ւր, մեզ անդիտելի է եւ բնակորները մնացել են մօտ 800–1000 բնակիչ, այսօր նա էլ հարուած է ստանում մորեխից, որ ի՞նչ թչուառութեամբ եւ նեղութեամբ ցանք են արել աղքատ ժողովուրդը: Երկու տարին ինչ որ ցանեցին, մորեխը կերաւ, բայց իրանք հազիւ ապրող մարդիկ էին: Դրանով չբաւարարեց վտանգը, սկսեց հիմա կոմիր եւ եղներ կոտորել. այնպիսի թչուառութեան էին մատնուել, որ չի կարելի դրել. սա մի համառօտ գրել է: Այդ տարիք էլ մեծ պատերազմի պատճառու

հրաման կար, որ Պարսկաստանի, մանաւանդ Զարմհալի Հայերը կոտորել. սրեդակը էնց այդ օրերին խաւարել է, կարծես ամէն տեղ կապուած էր Հայ օրին, որ կողմը Թուչէիր փախչելու, չունէիր ճանապարհ. Պարսկաստան էր, հանաքի բան չէր, դեռ մինչեւ 1916 Թուականին Զարմհալ մի դժբաղդութեան մասնուեց, որ լեզու չի կարող բացատրել»:

Երկիշը 1914–1916 Թուականի չրջանում պետդպիների անհատական կեանքի քայքայման, նրանց Թշուառութեան եւ դժբախտութեան մասլ պատկերը դնել է մի տաղով, ուր կարդում ենք.

— *Այս պատկ ոսանաւորը վան մտնելի եւ կով մահանալու համար.*

Հազար իճը հարիւր 14–ից Զարմահալը վատացաւ,
Պատճառն էր գովմարգին եւ մորեխը.
Ոգջ Հայ ժողովուրդը աճիւնացաւ,
Կ'ընթանար ոգջ գործերը դէպի ձախը:

Երեք հարիւր տարվան տներ,
Երկար տարիք ապրումներով,
Քանդեց, փլատակեց, արեց աւեր
Ու վտարեց ճշդումներով:

Ազգատացան ոգջ ամէնը,
Թողին, երկրէ շատ հեռացան.
Չկար օգնող երանց ոմըն
Երկրէ երկիր վտարուեցան:

Այսպէս եղաւ Զհարմհալի
Սկիզբ ցորա ձախորդութեան.
Կորան լաւ օրերը ցնծալի,
Այժմս թախտեղով պատյտ կը գան:

Մեծ պատերազմի թուականից,
Եղաճ դժբաղտ, ցնցոտ մի կեանճ.
Արեգակը, որ խաւարեց,
Ցոյց էր մեզի մեծ թշուառանճ:

Կորան եւ խիստ սնանկացան
Ու փախչելով դէպի Խուզստան.
Թշուառութեամբ խիստ մերկացան
Ու փնտռելով միշտ ապաստան:

Զարմահալի պետդպիներից չատերը, իրենց կանանց հետ, առատիկ սովից փախչում են դէպի Խուզստան: Իրենց օջախները լքում են նաեւ աղջիկները, երիտասարդ կանայք. նրանք, իրենց երեխաները դրկած, 18 օրուայ ճանապարհը գնում են քայլելով, անպաշտպան գնում են Պարսկաստանի անտառներով: Սովից, քաղցից եւ տանջանքից ոմանք ճանապարհին մեռնում են: Դա այն չրջանն է, երբ ցորենի բեռը վաճառում են 80 Թուման եւ չատերը սովից ազատուելու համար իրենց պէտքական ունեցածները, նոյնիսկ քնելու անկողինները էժան գնով ծախում են: Շատ անդամ էլ իրարից զողանում են: Անասելի եւ դաժան սովի ուերթածութեանը եւ դեղջուկ ժողովրդի Թշուառ վիճակին ականատես տաղարանը, իր ձեռագիր մատեանի 46–րդ էջում գրքի տխուր պատկերը դնել է այսպիսի մտայլ գոյներով.

«Ախան մարդիկ փախչել Գեաբմահիր, կանայք յետեւներէն. սով է. ով տեսնում ես, ուղում է իրա դլուխը պահէ. Հայ երիտասարդ կանայք բնկնում են Խուզստան ճանապարհ մէնակ, Պարսիկների հետ, մէ պատառ հացով. մինչեւ անդամ «առեւանգրուած», չեմ կարող բացատրել նրանց վիճակը. իւրաքանչիւր քայլին կարող եմ ասել մի սոմամահին Թողում եւ անց կենում. ո՛վ էր տեսել այդպէս դառը վիճակ, աննկարագրելի է. 18 օրվայ ուռքով ճանապարհ կանայք, երեխան դիրկը, օրիորդներ ուռքով, Պարսկաստանի անտառներով անպաշտպան գնալ: Սովից են փախչում, որպէսզի հասնեն մի առատ երկիր, հասնում են, որոնք որ կարողանում են տեղ հասնել. ոմանք մեռան ոչինչ դրիճ. Զարմհալու կէս ժողովուրդը որ 4000 չունչ էր կազմրում, կէսն Թողին և փախան. այդ կէսն. կէսն էլ չյայտնուեց ինչ եղան. որը կորան կենդանի, որը մեռան. մնացեալը, որ դիւղերում են, վիճակները վատ. ցորենի բեռ 80 Թուման. կէսն քարից էր ու հողից. մնացեալ ուտելիքները դրա պէս Թանդ, որպէս սուզ, սկսան ժողովուրդը իրանց քրնելու ուերթող տեղերը ծախել, էժան գնով եւ մարմին պաշտպանել, ինչ որ ունէին, ծախեցին եւ կերան, վերջը էլ անօթի ին եւ իրարուց զողանում եւ սոմամահ լինում, որպէս մայրն գնում էր հանդից խոտ, խոտուղ բերէր, աղցան անէր զաւակի*

digitised by A.R.A.R.@

համար, մինչեւ գտնում էր, որ ին-կողնում մեռած էր տեսնում. Հարիւր այդպէս, մինչեւ անգամ նպատակամատոյց ըն-

կերութիւնը մօտ քան հազար թուման Զարմհայ եւ Փէրեայ բժշկանց չքաւորնե-րին»:

16.

Զանազան Տաղեր

Երգիչ Դանիէլը ձեռագիրը տպագրանն-բում կարգում ենք նաեւ տարբեր բովան-դակութեամբ յօրինուած ոտանաւորներ, ո-րոնք ընդգծում են նրա ստեղծագործու-թեան բազմազանութիւնը: Այդ տաղերից յատուկ ուշադրութեան արժանի են «Վատ կնոջ համար» ոտանաւորը, ուր նա դձել է տարբեր արժանիքներով եւ բարեմասնու-թիւններով օժտուած կանանց դիմանկար-ները: Երգիչը գիտէ, որ՝

Այս աշխարհս առանց կնոջ ամենեւին բան չի լի-նելու,
Շատ երանի այն մարդկանց, որ կանայք են իրենց հլու:
...Գատրաստ է միշտ յաւ տիկիները տուն գացողին պատիւ տալու,
Արժէ այդպիսի տիկնանց ուրախ սրտով միշտ յար-գելու:

Տաղասանը շատ բարձր է գնահատում եւ գովաբանում «խելօք», «չնորհալի», «ճշմարտախօս» եւ «պարկեշտ» կանանց, որոնք իրենց ամուսնու համար ո՛չ միայն «ոսկեթաղ» են եւ իրենց գեղեցիկ յատկու-թիւններով պատիւ են բերում իրենց ընտա-նիքին, այլեւ իրենց բարութեամբ երջան-կացնում են ուրիշներին եւ վերացնում ազգի ցաւերը: Երգիչն ափսոսում է, որ նման յաւ, տիպար կանայք ամէն տեղ էլ չիչ կան:

Երգիչը դատապարտում է այն կանանց, որոնք ո՛չ միայն հասակը են, կեղծաւոր, փոպատպուտ, պճնասէր, ցուցամոլ ու տնա-քանդ, այլեւ մեռասակար են, ամբարտա-ւան, անզգամ եւ մատնիչ: Խորհուրդ է տա-լիս նաեւ նման բացասական յատկութիւն-ներով օժտուած կանանց չվստահել, չհա-ւատալ եւ նրանցից միշտ զգոյշ լինել:

Դանիէլը դձել է նաեւ այն կնոջ պատ-կերը, որ միանգամայն «վստահելի» է, որի համար, առանց ափսոսալու, կ'արժէ ա-ոատօրէն «ծախսեր» անել, բայց «անգնահ» կին էլ կայ, որի ձեռքում իր ամուսինն ամ-բողջ տարին դերի է.

Շատ կին կայ վստահելի, ինչ որ կամիդ է, հետն խօսիր,
Առատօրէն նրա համար ծախսեր արա՛, մի՛ ափ-սոսիր.
Բայց կին կայ իր ամուսնին տարէն տաս երկու ամիս է խօսիր,
Գանգի անգգամ է, ո՛վ ընթերցող, դու լաւ լսի՛ր,
Այդպէս կնոջ ձեռքէն դու գնա՛ գերեզմանդ փոսիր:

Տաղասանը թէեւ կանանց շատ է քե-րագնահատում, բայց իր տաղի վերջում սրբագրում է իր սխալը.

Ո՛վ Դանիէ՛լ, քա՛ւ է, կանանց դու ինչ բանքասէ,
Համեստ կանայք շատ կան, ամանչիր, ասածներդ բաւ է,
կարծում ես այս կանայքը մեզի շատ վնա՞ս է:
Սողոմոն յարգեց կանանց ու այսպէս կ'ասէ.
«Կինը ոսկեհուր թագ է, մարդին որպէս լոյս է»:

***

Տաղասաց Դանիէլն ոտանաւորի նիւթ է դարձրել նաեւ «Վատ ազամորդու ծնունե-լուց մինչեւ հարիւր տարուայ վախճանը», ուր տալիս է իր մանկութեան, պատանե-կութեան, երիտասարդութեան եւ ծերու-թեան չրջաններին տասիճանական զարգաց-ման եւ ձեւակերպման պատմութիւնը: Այս նիւթի մասին գրել են մի չարք աշուղներ եւ տաղասաններ, որով նրա տաղը նորու-թիւն չէ, բայց հետաքրքիր է իր ուրոյն կառուցուածքով, իր պարզ պատկերաւո-րութեամբ եւ լեզուական առանձնութեամբ:

Նա մի քանի ոտանաւորներով պատկե-

digitised by A.R.A.R.@

րել է նաեւ իր ծննդավայր Զարմահալ գաւառի գեղեցկութիւնը եւ նահապետական գեղջուկ ժողովրդի կենցաղի ուրոյն գծերը: Դրանցից յիշատակենք «Վանո իմ ծննդավայրիս համար, որ է Զարմհալ» խորագրով ոտանաւորը: Դա մի պարզ եւ անպաճոյճ տող է, որը թէեւ չունի գեղարուեստական երանգաւորում, բայց հետաքրքիր է իր կենցաղային գծագրութեամբ:

Տաղաբանն անցեալ կեանքի կարօտագին եւ քաղցր յուշերով համակուած՝ նկարել է նաեւ իր ծննդավայր հայաբնակ Մամուրա գիւղի ժողովրդի անտեսական դրութիւնն, կենցաղային կեանքի եւ սովորութիւնների պատկերը: Այդ տեսակէտից էլ ոտանաւորն ունի ո՛չ միայն պատմական, այլեւ ազգագրական ուրոյն արժէք եւ իր պարզունակ, բայց դունագեղ բովանդակութեամբ հարստացնում է Զարմահալի Հայ գրականութեան դանձարանը: Ուշագրաւ է, որ նա իր ծննդավայրի մասին Ա. Ճեռագիր մատեանի 5–րդ էջում, սեղմ տողերով արձանագրել է ապագիտ տողեր. «Մեր հին գիւղ՝ Մամուրա, իմ ծննդավայրս եւ հողագործութեան տեղը... արժում է մի քանի խօսք ասել. մի ժամանակ այս գիւղը 180 տուն ընտանիք ին կազմում, մօտ հազար չունչ ին, կը տեսնէիր գիւղի առաջը 40 ձեր, միրուքաւոր մարդիկ, մօտ 3 քահանայ, միշտ եկեղեցասէր, մօտ տասն հազար դաս եւ ոչխարի տէր, երկու հազար ձի, ջոբի, կով, եղ եւայլն: Գիւղը հարուստ, անկախ ին, ոչ մէ պականորդութիւն չրկար նորանցում. տղայքը հօրեբէն հնազանդ, հարեաններ՝ կեսուրներին. ամէնը խնամի, քաւոր եւ արիւնակից»:

Տաղաբանը սրտի խոր կսկիծով պատմել է նաեւ գիւղացիների կեանքը խորապէս յուզող մի տխուր պատահար, որ տեղի է ունեցել 1900 թուին:

Զարմահալի Վերին — Քօնարք գիւղի տանուտէրի որդին Աւետիսը եւ գաւառին պատիւ բերող աշուղ Ճարքուն Օղլու Քոռ՝ Սիմոնը 1900 թուին գիւղից գնում են Լօռեստան, որ Լօռերից ապուէսի կաշի գնեն եւ իրենց բնտանիքի ապրուստի համար մի որոշ դրամագլուխ շահեն: Սակայն, նրանք Լօռեստանի սարերում, սաստիկ բքի պատճառով՝ մնում են ձիւնի տակ եւ անասելի ցրտից սառում են ու մահանում: Նրանց մահուան տխուր լուրը տարածւում է գիւղերում: Շուտով Վերին եւ Ներքին Քօնարք գիւղից 40 գեղջուկներ ճանապարհւում եւ բարձրանում են Լօռեստանի սարերը եւ մի-բողջ տասն օր ձիւների մէջ որոնում են երկու դժբախտ երիտասարդների դիակները, բայց չեն գտնում: Նրանք անմատոյցնակ սարերի գագաթին յոդնած, վատահած, քաղցած եւ մոլորուած՝ մտնում են մի քարաժայռի մէջ եւ մի նամակով նկարագրում են իրենց ողբերգական ծանր վիճակը եւ խնդրում չուտափոյթ օգնութիւն: Ապա նամակը ծրարում են մի թաշկինակի մէջ, կապում իրենց հետ բնկերակցող շան վզին եւ առանց գնդակի հրացան արձակում խելօք եւ խմաստուն շան վրայ, որպէսզի նա վախենայ եւ նամակը չուտով դիւղ հասցնի: Հաւատարիմ շունը ձիւնաժածկ լեռները, ձորերը, խոր անդունդները դիշեր-ցերեկ անցնելով եւ երկու օրուայ հանապարհը մէկ ժամում կտրելով՝ կէս դիշերին հասնում է գիւղը, կանգ առնում տանտիրոջ դրան առջեւ եւ սպիտղորմ ոռնում: Բայ են անում դուռը, շանն իսկոյն մի տաք անկիւնում հանգստացնում եւ վզին կապուած թաշկինակի միջից նամակը հանելով՝ խոր յուզումով կարդում արձանագրուած տողերը: Նամակի տխուր բովանդակութիւնը ծանր տպաւորութիւն է թողնում եւ խորապէս յուզում գիւղի ամբողջ ժողովրդի հոգեկան աշխարհը:

Գիւղում մնացած քոյ գեղջուկներն իրենց հետ առատ պաշար են առնում եւ անմիջապէս ճանապարհւում: Նրանց առաջնորդում է հաւատարիմ եւ խելացի շունը: Միւս օրը, բազմաթիւ նեղութիւններով եւ շարչարանքով, հասնում են սարի գագաթին բազմած քարայրը եւ փրկում իրենց հարազատներին:

Տարաբախտ Աւետիսի եւ Սիմոնի դիակները գտնում են միայն Աւետեանց տանին, երբ ձիւնահալ է լինում:

Դժբախտ երիտասարդների սառած դիակները բերում են Վերին-Քօնարք եւ թաղում գիւղի հանդստարանում:

Երդիչն ոտանաւորի նիւթ է դարձրել նաեւ իրանի գեղեցկութիւնը կազմող հրա-

digitised by A.R.A.R.@

կայ գետերից մէկը: 1916 թուին նա, իր կնոջ եւ Սիմէօն զաւակի հետ, լօստաանով գնում է Գեարմասիր և 4–5 օր անց հասնում է Փոլրշալու: Դա Իրանի այն մեծ գետն է, որի վրայ Անգլիացիները 1890 թուին մի մեծ կամուրջ են պատրաստում, որի ընդհանուր գեղեցիկ տեսարանը խոր տպաւորութիւն է թողնում երդչի վրայ:

17.

Իրբեւ Աշուղ

Տաղարան Դանիէլը գեռ պատանեկան չրջանից սիրում է աշուղական երգն ու նուագը: Նրա հոգու եւ սրտի վրայ խոր դրոշմ են գնում ձմեռներն իրենց գիւղ եկող եւ գեղջկական խնջոյքներին, հանդէսներին, հարսանիքներին առանձին վայել տալու Հայ եւ Պարսիկ աշուղների երգերն ու տաղերը: Նա առանձին սիրով համակուած լսում է նրանց նուագն ու երաժշտութիւնը, նրանց պատմած սիրավէպերն ու հէքիաթները: Խոր տպաւորութիւններ է առանում նաեւ աշուղական վէճերից ու մրցումներից: Առանձնապէս օգտւում է Մամուքա գիւղն այցելած Թափառական աշուղների արուեստից:

Աշուղների երգ ու նուագի խոր ազդեցութեան ներքոյ էլ նա նուիրւում է դաւանական արուեստին եւ չնորհիւ իր ուշիմութեան եւ ընդունակութեան՝ կարճ ժամանակում սովորում է չօնգուր նուագել: Այնուհետեւ նա գեղջկական խնջոյքներում, հարսանիքներում եւ հանդէսներում, իր չօնգուրի նուագակցութեամբ եւ զուրկան ձայնով երգում է իր յօբինած սիրային, հարսանեկան, բարոյա–խրատական, երգիծական երգերն ու տաղերը:

Նա ամբողջ հոգով սիրում է իր նուագարանը եւ մի ուռանուորով գովերգում նրա գեղեցիկ յատկանիշները.

Ա՛յ իմ չօնգուռ դու ոսկէհուռ,
Ձքա՞գ ես, թէ երկնային նուռ.
Բոլոր խփուած սրտներուն
Դու կը բացես ընդարձակ դուռ:

Ա՛յ իմ չօնգուռ իմ սրտակից,
Խաթամ արել ես սատափից.
Զարդարել եմ ոդջ թադաւոր
Ու արել եմ իմ սրտին կից:

18.

Որպէս Քարտաշ–Փորագրիչ

Շնորհալի ինքնուս առեղծագործող տաղարան Դանիէլը Զարմահալում յայտնի է դարձել եւ ժողովրդականութիւն վայելել ոչ միայն որպէս տաղարան, այլեւ որպէս վարպետ եւ հմուտ փորագրիչ:

Քարտաշութեան եւ փորագրութեան արուեստները նա վարպետ մօտ չի սովորել, ա՛յլ էլ ցանկացել է քարտաշ լինել: Սակայն, Զարմահալում տիրող ժամանակի հանգամանքները եւ հրամայողական պահանջը նրան ստիպում են 1908–1914 թուականներ նուիրուել բրիչին ու փոքրիկ մուրճին եւ յուռ քարերին խօսեցնել: Դա այն չրջանն էր, երբ Զարմահալում չկային Հայ քարտաշներ, իսկ Հայերի տապանաքարերը տաչում են ու յղկում Պարսիկ փորագրիչները, որոնք քանդակում են մօտ հարիւր մեծ ու փոքր գեղեցմանաքարեր: Նրանք տաղարան Դանիէլից խնդրում են Հայ գիւղացիներից իրենց պատուէր տուած Հայերէն տառերը տապանաքարերի վրայ թանաքով գրել, որպէսզի իրենք կարողանան քանդակել: Բայց նրանք անծանօթ լինելով մեսրոպեան գրերին, սխալ են քանդակում եւ շատ անգամ աղաւաղում արձանագրութեան հարազատ միտքը: Տաղարանն ստիպուած ինքնաչխատութեամբ սովորում է յուշարձաններ քանդակելու եւ տառեր փորագրելու արուեստը

digitised by A.R.A.R.@

եւ կարճ ժամանակում այնքան դեղեցիկ տառերով է փորագրում, որ քարտաշութեան ու փորագրութեան արուեստում վարպետ քանդակագործի հռչակ է վայելում: Այդ օրից էլ տապանաքարերի փորագրութեան համար չտառերը նրան են դիմում եւ իւրաքանչիւր գերեզմանաքարի չիւտակարանը քանդակելու վարձ նրան վճարում են 4–20 թուման: Այդ չրջանում նա, մի տարուայ ընթացքում նիւթական լաւ վարձատրութիւն է տանում:

19.

Իբրեւ Մանրանկարիչ

Տապատաց Դանիէլն իր միջավայրում հռչակուել է նաեւ որպէս մանրանկարիչ: Նրա վրձինած բազմազան մանրանկարները, որոնք վկայում են իր նկարչական ձիրքի, ճաշակի եւ արուեստի էութեան մասին, խոցացնում են իր Բ. ձեռագիր մատեանի դեղեցկութեան տպաւորութիւնը: Նկարիչն իր արուեստի եւ տաղերի գնահատութիւնը տուել է այսպիսի բնորոշ տողերով.

Դանիէ՛լ, դու նաղաշով ես զբաղվում,
Զօր ու գիշեր ջանիդ վրաճ ես աղվում.
Ասօսէքդ էլ ո՛չ մի տեղ չի վաճառվում,
Ուրեմն գնեճ ու չգնեճ, երկուսն էլ մէկ եճ:

Նկարչի վրձինած մանրանկարների մէջ իւրայատուկ տեղ են գրաւում զարդանկարները, որոնք տաղարանի էջերին առանձին գրաւչութիւն են տալիս: Այս լուսանցազարդերից չատերն նկարուած են տարբեր ոճերով եւ ուշադրութիւն գրաւում են իրենց ներդաշնակ յօրինուածքով, հիւսուածքի պարզ բայց հետաքրքրիր գծագրութեամբ, իսկ կարմիր, կապոյտ, դեղին եւ այլ երանգների ներդաշնակութեամբ արտայայտիչ են ու գրաւիչ: Կան մանրանկարներ, որոնք իրենց ինքնուրոյն ոճով զանազանուում են եւ հայկական, մասամբ էլ արեւելեան նկարչութեան տարբեր դեղեցկութիւններ են:

Ձեռագիր մատեանի որոշ էջերի մի այլ գրաւչութիւնը կազմում են մեսրոպեան զարդագրերը, գլխատառերը, և թռչնագրերը: Դրանցից յատուկ ուշադրութեան արժանի են Բ. ձեռագիր մատեանի 3 էջերի ոսկեզօծ Ա–Զ. թռչնագրերը: Լաւագոյն նրմուշներն են նաեւ 34, 35 եւ 36–րդ էջերի դունագարդ գլխատառերը, որոնք միանգամայն տպագիր տառերի տպաւորութիւն են թողնում:

Վրձինի տարբեր բայց ուշագրաւ գծագրութիւններ են նաեւ ձեռագիր մատեանի 41 եւ 238–րդ էջերի մեծագիր զարդանկարները, որոնք իրենց ոճային արուեստի բազմազանութեամբ եւ ամբողջական ներդաշնակութեամբ առանձին գրաւչութիւն են տալիս մատեանի նկարչական արուեստին:

Ձեր ուշադրութիւնն իրենց վրայ են կեդրոնացնում նաեւ գիմանկարները, որոնք վրձինուած են բաւական յաջող գրծագրութեամբ: Դրանցից ուշագրաւ են Ա–սոլեսատանի Շամիրամ թագուհու (էջ 120, Բ. հատոր) եւ Աբա Գեղեցիկի (էջ 121, Բ. հատոր) ամբողջ հասակով գծուած նկարները, որոնք ցոյցացնում են պատմական կերպարների յատկանշական գծերը:

Նկատենք, սակայն, որ նկարչի գծած մանրանկարները դեղարուեստական բարձր մշակում չունեն: Չնայած այդ հանգամանքին՝ տաղարանի նկարների էական յատկանիշն ինքնատպութիւնն է, որն արժէքաւորում է նրա նկարչական կերպարը:

digitised by A.R.A.R.@

20.

վերջաբան

Տաղարան Դանիէլ Հախնազարեանի բանաստեղծագործութիւնների մասին մեր արձանագրած տեղեկութիւններն ու լուսաբանութիւնները եզրափակելով նշենք, որ նա իր միջավայրում յայտնի է դարձել որպէս տաղարան-աշուղ, մանրանկարիչ եւ քարտաշ-փորագրիչ: Նա եղել է ինքնուս ուսուցչապետ եւ ինքնաուիս տաղանդաւոր:

Նրա տաղերի թողած տաղանդաւորութիւնների էական յատկանիշը բազմազանութիւնն է: Այդ պարզ, անպաճոյճ եւ անարուեստ տողերն ուշադրութեան արժանի են նրանով, որ գրուած են անկեղծ ներշնչումով ու ջերմ զգացումներով եւ գրաւիչ են իրենց դիւրագեղ բովանդակութեամբ եւ կառուցողական արուեստի ազատութեամբ, յատկանիշներ՝ որոնք նրա տաղերին որոշ փայլ են տալիս:

Սակայն ինչո՞ւմն է կայանում տաղարանի տաղերի դիւանագիտութիւնը: Նրանում, որ նա մի շարք տաղերով երգել է իր քնարական ապրումները, իր հոգեկան աշխարհի յոյզերը, իր վշտերն ու տանջանքները:

Նա տաղանդաւորութեան նիւթ է դարձրել նաեւ իր ժամանակի գեղջուկ ժողովրդի կեանքի որոշ դէպքերն ու երեւոյթները եւ գծել է իր ապրած միջավայրի կերպարների թերութիւններն ու պակասութիւնները:

Իր յօրինած բարոյա-խրատական տաղերով ձգտել է նա մարդկանց կրթել ու դաստիարակել եւ ազնուացնել նրանց սրտերն ու հոգիները, առաջնորդելով նրանց դէպի բարին, գեղեցիկը եւ ազնիւը:

Առանձնայատուկ տեղ են գրաւում նաեւ տաղարանի յօրինած այլաբանական առակները, պատմական աւանդութիւնները, սիրավէպերը, հայրենասիրական ու երգիծական առանձնաւորները: Այդ դիւցազեղ, բայց պարզ, անզարդ տաղերը համակում են ճշմարիտ խոհերով ու յոյզերով: Այդ երեւոյթը պիտի բացատրել թերեւս նրանով, որ նրա չօշափած նիւթերը վերացական չեն, այլ պատկերում են իրական կեանքի դէպքերն ու երեւոյթները: Այդ տեսակէտից էլ արժանի են ուշադրութեան:

Բայց կայ մի այլ կարեւոր հանգամանք: Տաղարանն իր մի շարք տաղերով պատկերել է իր ապրած միջավայրի Հայ գեղջուկ ժողովրդի կեանքի հիմնական էջերը: Արդարեւ, ովքեր ցանկանում են ծանօթանալ Սպահանի Զարմահալ գաւառի բնութեան գեղեցկութեան, գեղջուկ ժողովրդի կենցաղային կեանքի, նրա ապրած անտեսական ծանր եւ անմխիթար պայմանների հետ, նրանք պէտք է կարդան տաղասաց Դանիէլի տաղերը, որոնք Զարմահալի պատմութեան ուսումնասիրութեան համար, մեծ մասամբ, արժէքաւոր վաւերագրեր են:

Այդ տաղերն էլ հարստացնում են Զարմահալի Հայ գեղջուկ ժողովրդի գրականութեան պատմութեան դանձարանը:

Ահա թէ ինչո՛ւ տաղասացն իր քնարական, հասարակական եւ այլ արժէք ներկայացնող մի շարք տաղերով Հայ տաղարանական գրականութեան պատմութեան մէջ կարող է ուրոյն տեղ գրաւել:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

փեհլեվի
(վերջ՝ 7)

digitised by A.R.A.R.@